


# ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989\_2022.4-81

**Հիմնաբառեր.** կոգնիտիվ ընդունակություններ, գիտելիք, հմտություն, բնավորություն, մեթակրթություն, հեռավար ուսուցում, համակցված ուսուցում

Անսահմանափակ տեղեկատվությունը շարժառիթ առավելությունից վերածվում է արգելակող գործոնի: Վերջինի հետ կապված՝ առավելապես ընդգծվում են սովորողների վերլուծական կարողությունների թուլացումը և դրանց փոխարինումը «ստեղծարարական գրազգիտությամբ»: Ներկայում ՀՀ կրթական գործընթացներում առանձնակի կարևորություն են ստանում տեղեկությունների չափաքանակներով պայմանավորված ռիսկերը և կրթության սուբյեկտների տեղեկատվական գերբեռնվածությունը: Բաց կրթական համակարգերը կոչված են նպաստելու մարդու ճանաչողական առաջընթացին և գիտելիքի կուրսակմանը: Հաղորդակցությունը, թիմային աշխատանքը, քննադատական մրցակցությունը և ստեղծագործական ունակություններն էական դեր ունեն հեռավար ուսուցման մեջ:

Անսահմանափակ տեղեկատվությունը շատ հաճախ առավելությունից վերածվում է արգելակող գործոնի: Առավելապես ընդգծվում են սովորողների վերլուծական կարողությունների թուլացումը և դրանց փոխարինումը «ստեղծարարական գրազգիտությամբ»: Համացանցում անհրաժեշտ տեղեկույթի որոնումը, առաջին հայացքից, սովորողներից չի պահանջում առանձնակի հմտություններ, ինչի հետևանքով հաճախ ի հայտ են գալիս մեծաքանակ, երբեմն՝ իրարամերժ կամ միօրինակ տեղեկություններ: Ինքնակրթությունն այս դեպքում շատ արագորեն վերածվում է պատկերային ընկալման ու մտապահման, քան հասկանալու և վերլուծելու գործընթացի: Ձևավորվում է մի իրավիճակ, երբ



## Արսեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տնտեսագետ

2000 թ.-ից մասնագիտական գործունեություն է իրականացնում պեդագոգական, համայնքային կառավարման ոլորտներում՝ աշխատելով քաղաքացիական և համայնքային ծառայությունների համակարգերում: 2019 թ.-ից աշխատում է Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչությունում՝ որպես պեդագոգական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսական գործառույթների կազմակերպման բաժնի պետ: 2022 թ. Chelsea Business School (Անգլիա), EKLYA Business School (Ֆրանսիա)՝ «Կրթության կառավարում» մասնագիտացած դասընթացի ունկնդիր է: Հեղինակ է ոլորտին առնչվող մի շարք վերլուծական աշխատանքների:

 <https://orcid.org/0000-0002-7104-0689>

առաջնային դերակատարում են ստանում տեղեկույթի ստացումն ու փոխանցումը՝ սովորողների մեջ գրեթե չձևավորելով համակարգված գիտելիք և, դրանով պայմանավորված, վերլուծական մտածողություն: Այս ամենի հետևանքով աստիճանաբար թուլանում են կրթվելու իրական դրդապատճառները, նվազում են սովորողների ուսումնաճանաչողական ակտիվությունը, ինքնակրթվելու մղումը՝ ձևավորելով պարզ, կաղապարված մտածելակերպ<sup>1</sup>:

Երկայում ՀՀ կրթական գործընթացներում առանձնակի կարևորություն են ստանում տեղեկատվության չափաքանակներով պայմանավորված ռիսկերը և կրթության սուբյեկտների տեղեկատվական գերբեռնվածությունը: Բաց կրթական համակարգերը կոչված են նպաստելու մարդու ճանաչողական առաջընթացին և գիտելիքի կուտակմանը: Այլ են տեղեկույթի հետ աշխատելու հոգեբանական գոր-

ծոնները, սովորողի կողմից դրանց ընկալման կառուցակարգերը: Համաձայն է. Տոֆլերի ուսումնասիրությունների՝ մարդու մեջ գոյություն ունի տեղեկությունների մուտքի և կուտակման որոշակի սահման<sup>2</sup>: Ընկալման առումով, դա պայմանավորվում է տեղեկույթի ստացման արագությամբ, ծավալով կամ բազմազանությամբ: Ֆիզիոլոգիական տեսանկյունից, մարդու ուղեղը կարող է կուտակել և մշակել որոշակի ծավալի տեղեկույթ: Արագորեն ստացվող տեղեկույթը գերգրգռում է գիտակցությունը, արդյունքում՝ խոշորածավալ նյութերը մտապահելու համար այն ինքնըստինքյան տրոհվում է մանր հատվածների, և ուղեղն աստիճանաբար դադարում է լիարժեքորեն գործել, նվազում են վերջինիս ստեղծագործական ներուժն ու արդյունավետ գործունեությունը: Այս իրավիճակն ուղեկցվում է զգայական ընդունակությունների բթացմամբ ու կշռա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

**Սովորողի կոգնիտիվ ընդունակությունների վրա ազդող գործոններ<sup>3</sup>**

<sup>1</sup> Стрекалова Н.Б., Влияние информационных технологий на качество учебного процесса, Известия Самарского научного центра Российской академии наук. Социальные, гуманитарные, медико-биологические науки, т. 19, №6, 2017, ст.48-52, Тольяттинская академия управления. г.Тольятти, Россия.  
<sup>2</sup> Alvin Toffler, «Future Shock».  
<sup>3</sup> Стрекалова Н.Б., Влияние информационных технологий на качество учебного процесса, Известия Самарского научного центра Российской академии наук. Социальные, гуманитарные, медико-биологические науки, т. 19, №6, 2017, ст.48-52, Тольяттинская академия управления. г.Тольятти, Россия.

դատված որոշումների ընդունման բնածին ունակության կորստով՝ առաջացնելով հոգնածության զգացում:

Այսպիսով՝ տեղեկատվական գերբեռնվածությունը կարող է բարդացնել սովորողների առողջական ու հուզահոգեբանական վիճակը և ձևավորել տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների այնպիսի իրավասություններ, որոնք միտված չեն նպաստելու ձեռք բերված գիտելիքի կիրառմանը կրթական և մասնագիտական հետագա գործունեության մեջ:

«Ներկա կրթական գործընթացներում ուրվագծվում է տեղեկատվական մշակույթի ոչ լիարժեք ընկալում ոչ միայն սովորողների, այլև մասնագետների և, ընդհանրապես, հասարակության շրջանում՝ պայմանավորված տեղեկատվահաղորդակցական անբավարար իրավասությունների առկայությամբ: Մինչդեռ մասնագետների պատրաստման և վերապատրաստման կրթական գործընթացը մշտապես հրատապ է:

Այս ամենը գալիս է հաստատելու, որ «Ն-ում միայն տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաներով, առանց լիարժեք ու միասնական ուսումնամեթոդական հարացույցի, գրեթե իրատեսական չէ կրթված անհատի ձևավորումը:

Մասնագետների կրթության և վերապատրաստման ծախսերն այսօր աճի միտում ունեն: Տնտեսագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նույնիսկ կարճաժամկետ ուսուցումը տնտեսական լուրջ շահավետություն է ապահովում: Այս խնդիրը տեղափոխվում է նաև ավագ դպրոց, բուհ և մասնագիտական կրթական համակարգ: Աշխատաշուկայի պահանջներով պայմանավորված՝ մասնագիտությունները և դրանց ուսուցանումը «Ն կրթական հաստատությունների համար լուրջ դժվարություններ են առաջացնում: Գործարար աշխարհի թելադրանքով՝ հայաստանյան համալսարանները մեծ կարիք ունեն անձնակազմի վերապատրաստման և այդ գործընթացի արժանատի փոփոխության: Անհրաժեշտություն է զգացվում պարզ թեստերի, տե-

սանյութ-դասերի կամ թվայնացված դասագրքերի համակարգից անցում կատարելու մեկ այլ՝ ներկառուցված կենսաբանական կամ ներյոցանցային (ինքնավար կարգավորման իմաստով) հարմարվող ուսման ալգորիթմների բարդ հարթակ, որտեղ իրական ժամանակում փոփոխվում է կրթության հետագիծն ըստ յուրաքանչյուր սովորողի անհատական ունակությունների:

Լավագույն դասախոսների (ուսուցիչների) մոտ սովորելն ինտերակտիվ դասախոսությունների միջոցով, խաղային իրավիճակների կիրառումը, ինտերակտիվ թեստերը (ներառյալ՝ տեսալսողական), վիրտուալ լաբորատորիաները և գործնական աշխատանքի հեռակա կատարումը, սովորողի վերահսկման հնարավորության ապահովումը, իրական գործընթացների մոդելավորումը, ցանցային նախագծի գործնական կազմակերպումը, ըստ ուսուցման ուղղության՝ ցանցային համայնքների ստեղծումը (առարկա, դասընթաց, խումբ և այլն) հեռավար ուսուցման լավագույն դրսևորումներն են: Միաժամանակ, տրամադրվում են անհատական դասընթացների պարբերական աջակցություն, առցանց (on line) և անցանց (off line) խորհրդատվություն, իսկ վերապատրաստման անհատականացումը, յուրաքանչյուր ուսանողի և դասախոսի աշխատանքի ոճին հարմարվելու ունակությունն ու վերապատրաստման ամրագրումն էլ ավելի են նպաստում կրթական գործընթացի բարելավմանը: Էլեկտրոնային ուսուցման մեջ օգտագործվող տեղեկատվական տեխնոլոգիաները խթանում են դասախոսին (ուսուցչին) բացահայտել սովորողների հետ աշխատելու արդիական մանկավարժական մեթոդներ և եղանակներ՝ նորանոր շարժառիթներ ապահովելով վերջիններիս կրթվելու համար: Ներկայացնենք այդ շարժառիթների բաղադրիչները: Ինչպես ավանդական, այնպես էլ հեռավար ուսուցման համակարգում առաջնային բաղադրիչը գիտելիքն է՝ իր միջգիտակարգային, ներգիտակարգային և հատկապես անդրգիտակարգային կապերով<sup>4</sup>:

<sup>4</sup> Մոդելի հիմքում համաշխարհային կրթության փորձագետ, գրող, ֆուտուրիստ և գյուտարար, կրթական վերափոխման կենտրոնի հիմնադիր, Հարվարդի կրթական գիտությունների ավարտական դպրոցի պրոֆեսոր, Օլիմի ճարտարագիտական քոլեջի նախագահական խորհրդի անդամ, «Արհեստական բանականությունը կրթության ոլորտում», «Քառաչափ կրթություն», «XXI դարի հնտություններ» գրքերի համահեղինակ Չարլզ Ֆեյդլի կրթական հարացույցն է:



ԳԾԱՊՍԱԿԵՐ 2

**Քառաչափ կրթական մոդել**

Անհրաժեշտ է ավելի ուշադիր լինել, թե որ գիտելիքն է հասանելի ժամանակակից որոնիչների միջոցով, որքան է դա կարևոր և որքանով է կապված ուսուցման գործընթացի հետ:

Հաջորդ երկու բաղադրիչները՝ հմտությունները (գիտելիքը կիրառելու մեր կարողությունը) և բնավորությունը (անհատական այն գծերը, որոնք օգնում են մեզ հաղթահարել դժվարությունները, հասնել նպատակին), ստեղծում են համախմբման մթնոլորտ ուսուցման գործընթացի շուրջ:

Հմտությունները՝ հաղորդակցություն, թիմային աշխատանք, քննադատական մտածողություն և ստեղծագործական ունակություններ, հատկապես հեռավար ուսուցման միջոցով պետք է սահմանեն սովորողի և ապագա մասնագետի տեղն

արագորեն փոփոխվող աշխարհում, նպաստեն փոփոխվող իրավիճակներին հարմարվելուն և կարողանան հաջողությամբ համագործակցել մեքենայացված համակարգերի և ալգորիթմների հետ: Բնավորության առումով, այս հարցադրումն ավելի դժվար է, քանի որ գործ ունենք ոչ թե կամայական կազմի ձևավորման համակողմանի հարթակի, այլ քրտնաջան աշխատանքի արդյունքի հետ՝ օգտագործելով հեռավար համակարգերի հնարավորությունները:

Այս երեք բաղադրիչների միավորմամբ է ներկայանում XXI դարի սովորողի կատարյալ կերպարը. նա իր ունակությունների զարգացումն արտահայտում է «ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ» թաղանթում: Իր կառուցվածքով սա մեքենայացված տեխ-

նուլզգիական հարթակ է, որն իրական ժամանակում հարմարվում է յուրաքանչյուր սովորողի կարիքներին և հարմարվողական ալգորիթմով ունակ է արագորեն բացահայտելու գիտելիքի և հմտությունների թույլ կողմերը՝ առաջադրելով դրանք շտկելու ուղիներ, ինչպես նաև մշտապես վերահսկելով ուսանողի ներգրավվածությունը կրթական գործընթացին:

Միաժամանակ, տեղեկատվական տեխնոլոգիաները և էլեկտրոնային ուսուցումը մտածողության ճանաչման գործընթացում չեն կարող լիովին փոխարինել կրթության ավանդական ձևին, և այստեղ էլ կարևորվում է հեռավար ուսուցման համակարգերով ուսուցանողի դերը:

Հեռավար ուսուցման համակարգերով ուսուցանողը պատրաստի գիտելիք փոխանցողից վերածվում է խորհրդատուի և կրկնուսուցի՝ օգնելով սովորողներին կերտել ուսումնառության անհատական՝ սեփական ուղին: Նրա աջակցությամբ սովորողները կրթական գործընթացի պասիվ սպառողներից վերածվում են ակտիվ մասնակիցների՝ նպաստելով նոր գիտելիքի ստեղծմանն ու կուտակմանը: Այդուհանդերձ, ժամանակակից տեխնոլոգիաները զարգացման ներկայիս մակարդակում դեռևս չեն կարող ամբողջությամբ փոխարինել ուսուցանողի և սովորողի կենդանի հաղորդակցությանը, ինչը նշանակում է, որ գոնե մոտակա տասնամյակներում կարևորվելու է գործնական պարապմունքների, փորձասենյակների և ուսումնական գործընթացին նպաստող այլ կառույցների ու մասնակիցների առկայությունը: Հետևաբար՝ ՀՀ ներկա կրթական գործընթացում հեռավար և ավանդական ուսուցման համակարգերի միասնական կամ մասնակի (blended learning՝ համակցված) կիրառումը համարվում է ամենաարդյունավետն ու խոստումնալիցը:

Համակցված դասընթացները, միաժամանակ, ավելի ու ավելի բազմազան են դառնում՝ ենթադրելով համաժամանակյա դասընթացներ՝ բաշխված լսարանի ձևով, երբ դասավանդողը և սովորողների մի մասը ներկա են լսարանում, իսկ ոմանք դասին մասնակցում են առցանց (վեբի-

նար, տեսանյութ-կոնֆերանս, meet հարթակ)՝ տնից կամ մեկ այլ վայրից (լսարանից), ինչն արդարացված է ՀՀ ներկա իրավիճակում: Խառը ուսուցումը ներառում է ուսուցանող-սովորող կապ, հեռավար աշխատանքի կազմակերպում տարբեր միջավայրերում, վիրտուալ լաբորատոր համայնքներում, մշակված էլեկտրոնային դասընթացների զանգվածային օգտագործմամբ, սոցիալական ցանցերում և այլն:

Էլեկտրոնային ուսուցման արդյունքների գնահատումը, որպես կանոն, տեղի է ունենում ըստ թեստավորման կամ քննության, բայց կարող են նաև օգտագործվել գնահատման այլ կառուցակարգեր, երբ որոշ ուսանողներ ներառվում են գնահատման գործընթացում՝ այլ ուսանողների աշխատանքի վերաբերյալ քննադատական ակնարկների ներկայացմամբ: Այս ակնարկների վերլուծության հիման վրա էլ դասախոսը գնահատում է: Նման մոտեցումը ուսանողներին թույլ է տալիս հատել ավանդականի սահմանները, ավելի մանրամասն ուսումնասիրել և քննարկել դասընթացի բովանդակությունը, ավելի պատասխանատու կերպով վերաբերվել գիտելիքին և գիտակարգին:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ հեռավար, էլեկտրոնային և այլ նորագույն կրթական տեխնոլոգիաները, հիմնված ընդհանուր կրթության և ինքնուրույն աշխատանքի, անձնական գործունեության ու սեփական կրթական հետազոծի կառուցման վրա, սովորողից (ուսանող/աշակերտ) պահանջում են գիտական կարգապահություն, շարունակական կրթություն ստանալու պատրաստակամություն, որոնք չեն կարող ձեռք բերվել միայն էլեկտրոնային կամ հեռավար ուսուցմամբ, ուստի այն ենթադրությունը, որ ՀՀ-ում ավանդական կրթությունն այսօր հնարավոր է լիարժեքորեն փոխարինել միայն հեռավար ուսուցմամբ, նվազ իրատեսական է:

ՀՀ-ում «Քառաչափ կրթական մոդելի» գործնական կիրառման նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ հետազոտական խնդիրները.

1. հեռավար ուսուցման միասնական մեթոդաբանական տեսության մշակում,
2. սովորողների հեռավար կրթության

- պահանջների գնահատում,
3. հեռավար ուսուցումը կառավարող տեխնոլոգիաների մշակում՝ ըստ ներկայում առկա և կենսունակ կառուցակարգերի,
  4. որպես ուսման գործընթացի և կրթական ծրագրի նպատակ՝ սովորողների գիտելիքների ստուգման, գնահատման և ամփոփիչ արդյունքների համակարգի ստեղծում՝ ըստ կրթական վերջնարդյունքի՝ որպես սովորողի և ուսուցանողի գիտելիքների, կարողությունների գործնական հմտությունների, ինչպես նաև անձնային որակների և, դրանցով պայմանավորված, արժեքների համալիր:

Հեռավար ուսուցման գործընթացում, որպես մանկավարժական պայմաններ, արմատավորել.

- մասնագիտական դասագրքերը՝ մուլտիմեդիայի ուղեկցությամբ,
- ուսումնամեթոդական էլեկտրոնային համալիրները, դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները՝ իբրև կրթական բազա,
- նախավարժանքի համակարգչային ծրագրերը,
- էլեկտրոնային համակարգչային լաբորատորիաները,
- ստուգող-թեստավորող բազմանպատակ համալիրները,
- ուսումնական հաստատությունների հեռավար ուսուցման կրթական ծրագիրը

համարվում է իրականացված, եթե ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակի (կրեդիտների) 70%-ը սովորողները/ուսանողները յուրացրել են՝ անցնելով համապատասխան ստուգում:

Հեռավար համակարգում դասավանդողները պետք է համապատասխանեն կրթական այս տեխնոլոգիայի պահանջներին՝ ըստ վերը ներկայացված մոդելի:

Կրթական վերջնարդյունքի ստուգման, գնահատման և արդյունքներն իրավաբանորեն հավաստագրելու համար անհրաժեշտ է ստեղծել գիտելիքի, հմտությունների և իրավասությունների ստուգման մոդել՝ համաշխարհային կրթական գործընթացին համահունչ: Նմանօրինակ գնահատման համակարգի առկայությունը ՀՀ տարբեր կրթական հաստատությունների սովորողներին հնարավորություն կընձեռնի ներկայացնելու իրենց կրթական վարկանիշն աշխատաշուկային ընդունելի շրջանակներում, իսկ կրթական հաստատություններին թույլ կտա ունենալ արտասահմանցի սովորողներ, ինչը ֆինանսական լուրջ առաջընթաց կապահովի թե՛ կրթական հաստատության և թե՛ պետության համար: Միաժամանակ, գնահատման նման համակարգը կստիպի, որ մեծաթիվ սովորողներ վերանայեն իրենց կարողությունները՝ ձգտելով ստանալ շարունակական կրթություն:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Стрекалова Н.Б., Влияние информационных технологий на качество учебного процесса, Известия Самарского научного центра Российской академии наук. Социальные, гуманитарные, медико-биологические науки, т. 19, №6, 2017, ст. 48-52, Тольяттинская академия управления. г.Тольятти, Россия.
2. Alvin Toffler, «Future Shock».
3. Bernie Trilling, Charles Fadel, 21st Century Skills: Learning for Life in Our Times, ISBN: 978-0-470-55391-6, September 2009, Jossey-Bass, 256 P.

**Арсен АРУТЮНЯН**  
Экономист

ОБРАЗОВАНИЕ, ИННОВАЦИИ, ЗНАНИЯ

### ПУТИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ДИСТАНЦИОННОГО ОБРАЗОВАНИЯ В РА

Неограниченная информация зачастую из преимущества превращается в препятствие, ограничивающий фактор. Последнее обстоятельство обуславливает существенное ослабление аналитических способностей учащихся и их замену «клавишной грамотностью». В настоящее время особое значение в образовательных процессах РА приобретают риски, обусловленные большими объемами информации и информационной перегруженностью субъектов образования. Однако, образовательные системы призваны способствовать прогрессу познавательной способности человека и накоплению знаний. Коммуникация, командная работа, критическое мышление и творческие навыки имеют важную роль в дистанционном обучении.

**Ключевые слова:** *когнитивные способности, знания, навыки, характер, метаобразование, дистанционное обучение, смешанное обучение*

**Arsen HARUTYUNYAN**  
Economist

EDUCATION, INNOVATION, KNOWLEDGE

### WAYS TO INCREASE THE EFFICIENCY THE DISTANCE EDUCATION IN THE RA

Unlimited information often turns from an advantage into an obstacle. In relation to this, the weakening of student's analytical abilities and their replacement by «keyboard literacy» is emphasized. Nowadays, the risks caused by the amount of information and the information overload of education subjects are gaining particular importance in the educational processes of the RA. Open educational systems are meant to promote human cognitive progress and facilitate the accumulation of knowledge. Communication, teamwork, critical thinking and creativity play an important role in distance learning.

**Keywords:** *cognitive abilities, knowledge, skill, character, metalearning, distance learning, blended learning*